ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2017-8-3-Ա

ք. Երևան 20.12.2017թ.

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2017 թվականի դեկտեմբերի 20-ի նիստում քննարկեց 2017 թվականի նոյեմբերի 30-ին «Լավաշ քոմ» ՍՊԸ-ի (Երևան, Գարեգին Նժդեհի 56/2) ներկայացուցիչ Հայկ Սարգսյանի կողմից ներկայացված «LAVASH COM» (No20170437) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 7-րդ կետերի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ Կարգ) 93-րդ կետի 3-րդ, 7-րդ ենթակետերի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, ապրանքի կամ ծառայության տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ այլ բնութագրերը նշելու համար, և որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների բնույթի հարցում: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման 30-րդ դասի «լավաշ» ապրանքի համար և 43-րդ դասի ծառայությունների համար, քանի որ բացառապես բաղկացած է գրաֆիկական յուրահատուկ ոճ չունեցող «LAVASH» և «COM» գրառումներից, որոնցից առաջինը նկարագրական բնույթի նիշ է, չնայած լատինատառ գրված լինելուն ունի նույն հնչողությունը, ինչ «ԼԱՎԱՇ» բառը, որը հանդիսանում է ապրանքի տեսակ և լայն կիրառություն ունի հանրային սննդի բնագավառում, իսկ երկրորդը վերին մակարդակի ընդհանուր դոմենն է կոմերցիոն

կազմակերպությունների համար: Ինչ վերաբերում է 30-րդ դասի մնացած ապրանքներին՝ հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, քանի որ նրանում առկա «LAVASH» գրառումը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների բնույթի հարցում: Ինչպես նաև Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի և Կարգի 111–րդ կետի 14–րդ մասի համաձայն ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, եթե այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտը ներկայացնելիս հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված բառային ապրանքային նշանը ենթակա է մերժման, քանի որ կարող է շփոթություն առաջացնել «Հայր և որդի Երեմյաններ» ՍՊ ընկերության կողմից օգտագործվող «ԼԱՎԱՇ LAVASH» ապրանքային նշանին, որը գովազդվում է http://www.lavash.restaurant/, http://www.spyur.am/am/companies/lavash-restaurant/39672 կայքերում և որի մասին հայտատուն կարող էր իմանալ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 7-րդ կետերի համաձայն հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման 30-րդ դասի «լավաշ» ապրանքի համար և 43-րդ դասի ծառայությունների համար, քանի որ բացառապես բաղկացած է գրաֆիկական յուրահատուկ ոճ չունեցող «LAVASH» և «COM» գրառումներից, որոնցից առաջինը նկարագրական բնույթի նիշ է, չնայած լատինատառ գրված լինելուն ունի նույն հնչողությունը, ինչ «ԼԱՎԱՇ» բառը, որը հանդիսանում է ապրանքի տեսակ և լայն կիրառություն ունի հանրային սննդի բնագավառում, իսկ երկրորդը վերին մակարդակի ընդհանուր դոմենն է կոմերցիոն կազմակերպությունների համար: Ինչ վերաբերում է 30-րդ դասի մնացած ապրանքներին՝ հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, քանի որ նրանում առկա «LAVASH» գրառումը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների բնույթի հարցում: Ինչպես նաև Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, եթե այն կարող է շփոթություն

առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտը ներկայացնելիս հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված բառային ապրանքային նշանը ենթակա է մերժման, քանի որ կարող է շփոթություն առաջացնել «Հայր և որդի Երեմյաններ» ՍՊ ընկերության կողմից օգտագործվող «ԼԱՎԱՇ LAVASH» ապրանքային նշանին, որը գովազդվում է http://www.lavash.restaurant/, http://www.spyur.am/am/companies/lavash-restaurant/39672 կայքերում և որի մասին հայտատուն կարող էր իմանալ:

Բողոքարկողը չառարկեց կոլեգիայի ներկայացրած նախնական կարծիքը:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ որոշումը իրավաչափ է և բաժինը որոշումը կայացրել է ելնելով օրենքի դրույթներից:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել «Լավաշ քոմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հայկ Սարգսյանի կողմից ներկայացված «LAVASH COM» (No20170437) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ